ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N 01 ԱԱԿ-ԳՀԱՊՁԲ -18/5 ծածկագրով
գնանշման հարցման

գ.Արմաշ «08» հունվարի 2018 թ.

« Ակադեմիկոս Ա.Պ.Հայրիյանի անվ.Արմաշի առողջության կոնտրոն» ՓԲԸ-ը, ի դեմս տնօրեն Լևոն Հայրիյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Գնորդ, մի կողմից և <<Արմինաշող>> ՍՊԸ - ի դեմս Ընկերության տնօրեն Հ. Գերասիմյան, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Վաճառող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալ մասին.

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույց նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 6 540 300 (վեց միլիոն հինգ հարյուր քառասուն հազար երեք հարյուր)ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն[1]: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պյրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված ________ օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները[2]:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[3]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը[4]:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս բնտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու

պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի աճի հետ տակ ան փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում[5]:

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները[6]:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

---

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:[7]

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ

,,Ակադեմիկոս Ա. Հայրիյանի անվան Արմաշի առողջության կենտրոն,, ՓԲԸ
ՀՀ, Արարատի մարզ, գ. Արմաշ,
«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ » ՓԲԸ
Արարատի մասնաճյուղ
h/h 11500604222600
ՀՎՀՀ 04101356

Տնօրեն՝ Լևոն Հայրիյան

Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

<<Արմինաշող>> ՍՊԸ
ք. Արարատ, Սուրբ Ամենափրկիչ 28/4
Կոնվերս Բանկ ՓԲԸ
Հ/Հ 1930052367920100
ՀՎՀՀ 04112884

Տնօրեն՝ Հ. Գերասիմյան

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելվ...
N 01 <<ԱԱԿ ԳՀԱՊՁԲ 18/5 >> ծածկագ...
08.01.2018թ. կնքված գնանշման հարցման...
պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը | արտադրողը և ծագման երկիրը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/Հ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը** |
| 3 | 15112180 | Միս հավի (բուդ) | ԱՄՆ | Առանց փորոտիքի, մաքուր, արյունազրկված, առանց կողմնակի հոտերի,սառեցված, ԳՕՍՏ 25391-82: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560-Ն որոշմամբ հաստատված ,Միս և մսամթերքի տեխնիկական կանոնակարգիե և ,Սննդամթերքի անվտանգության մասինե ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի | կգ | 600.0 | 216000.0 | 360 | ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ փ. Ս. Նիկողոսյան 12 | 360 | 31.12.2018 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 9 | 15614200 | Բրինձ | Պակիստան | Սպիտակ, խոշոր, բարձր, երկար տեսակի, չկոտրած, լայնությունից բաժանվում են 1-4 տիպերի, բստ տիպերի խոնավությունը 13%-ից մինչև 15%, ԳՕՍՏ 6293-90, փաթեթավորումը՝ ԳՕՍՏ 26791-89: Անվտանգությունը և մակնշումը՝ N 2-III-4.9-01-2003 (ՌԴ Սան Պին 2.3.2-1078-01) սանիտարա համաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի | կգ | 320.0 | 480000.0 | 1500 | ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ փ. Ա. Նիկողոսյան 12 | | 31.12.2018 |
| 13 | 15619000 | Հաճար | ՀՀ | Ստացված հաճարի հատիկներից, հատիկներով խոնավությունը 15 %-ից ոչ ավելի, փաթեթավորումը՝ 50կգ ոչ ավելի պարկերով: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված Հացահատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգին և Սննդամթերքի անվտանգության մասին ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կգ | 280.0 | 134400.0 | 480 | ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ փ. Ա. Նիկողոսյան 12 | | 31.12.2018 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 18 | 15812120 | Գարա | ՀՀ | Կաթնահունց, շաքարահունց, խոնավությունը՝ 3-10%, շաքարի զանգվածային պարունակությունը՝ 20-27%, յուղայնությունը3-30%, տեղական արտադրության կամ համարժեք: Անվտանգությունը՝ ըստ 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ ՙՍննդամթերքի անվտանգության մասին՚ ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի | կգ | 1000.0 | 50000.0 | 50 | ՀՀ Արարատի մարզ գ.Արմաշ փ. Մ. Նիկողոսյան 12 | | 31.12.2018 |
| 21 | 155111600 | Խտացրած կաթ (400գր) | ՌԴ | Խտացրած կաթ շաքարով, մետաղյա տարաներով, խոնավությունը՝ 26.5 %-ից ոչ ավելի, սախարոզը 43.5 %-ից ոչ պակաս, կաթնային չոր նյութերի զանգվածային մասը՝ 28,5 %-ից ոչ պակաս, թթվայնությունը՝ 48 ОТ-ից ոչ ավելի, պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահից ոչ պակաս քան 70 %: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված ,Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգիե և ,Սննդամթերքի անվտանգության մասինե ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի | տուփ | 265.0 | 318000.0 | 1200 | ՀՀ Արարատի մարզ գ.Արմաշ փ. Մ. Նիկողոսյան 12 | | 31.12.2018 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 26 | 15530000 | Կարագ | ՌԴ | Սերուցքային, յուղայնությունը՝71,5-82,5%, բարձր որակի, թարմ վիճակում, պրոտեինի պարունակությունը 0,7 գ, ածխաջուր 0,7 գ, 740 կկալ կամ 20-25 կգ գործարանային փաթեթներով, ԳՕՍՏ 37-91 կամ համարժեք: Անվտանգությունը և մակնշումը ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված ,Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգիե և ,Սննդամթերքի անվտանգության մասին ՀՀ օրենքի 8-րդ հոդված | կգ | 2550.0 | 1020000.0 | 400 | ՀՀ Արարատի մարզ գ.Արմաշ փ. Ս. Նիկողոսյան 12 | | 31.12.2018 |
| 30 | 03142520 | Ձու | ՀՀ | Ձու սեղանի կամ դիետիկ, 2-րդ կարգի, տեսակավորված ըստ մեկ ձվի զանգվածի, դիետիկ ձվի պահման ժամկետը՝ 7 օր, սեղանի ձվինը՝ 25 օր, սառնարանային պայմաններում՝ 90 օր, ՀՍՏ 182-2012 Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ N2-III-4.9-01-2010 սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի, ,Սննդամթերքի անվտանգության մասին ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի | հատ | 55.0 | 550000.0 | 10000 | ՀՀ Արարատի մարզ գ.Արմաշ փ. Ս. Նիկողոսյան 12 | | 31.12.2018 |
| 32 | 15555100 | Պաղպաղակ հասարակ | ՀՀ | Սովորական հացե բաժակով, 50գր, Ըստ ԳՕՍՏ-ի | հատ | 50.0 | 60000.0 | 1200 | ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ փ. Ս. Նիկողոսյան 12 | | 31.12.2018 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 42 | 15111110 | Միս - տավարի | ՀՀ | Խոշոր եղջերավոր անասունների սպանդից ստացված մթերք՝ մսալիքի կամ մսեղիքի մասի տեսքով, որը մկանային, ճարպային, շարակցական 70% և 30% ոսկրային հյուսվածքների ամբողջություն է: Կարող է լինել թարմ՝ ստացված մորթից անմիջապես հետո, մկանների խորքում 35$^0$C -ից ոչ պակաս ջերմաստիճանով, պաղեցված ՝ մկանների խորքում 12$^0$C-ից բարձր ջերմաստիճանով, սառեցված՝ 0-4$^0$C-ից ոչ բարձր ջերմաստիճանով, միսն ու մսամթերքը պետք է ուղեկցվեն համապատասխանության նշանի մակնշմամբ կամ համապատասխանության սերտիֆիկատով, կամ համապատասխանության գրանցված հայտարարագրով: | կգ | 2140.0 | 2054400.0 | 960 | ՀՀ Արարատի մարզ գ .Արմաշ փ. Ս. Նիկողոսյան 12 | | 31.12.2018 |
| 44 | 15332290 | Ջեմ | ՀՀ | Ջեմ՝ տարբեր մրգերի, 1-ին տեսակի ՀՍՏ 48-2007: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ ,Սննդամթերքի անվտանգության մասինե ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի | կգ | 650.0 | 195000.0 | 300 | ՀՀ Արարատի մարզ գ .Արմաշ փ. Ս. Նիկողոսյան 12 | | 31.12.2018 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 45 | 15321000 | Հյութ մրգային (բնական) | ՀՀ | Մրգահյութեր՝ պատրաստված թարմ մրգերից և պտուղներից, պտղամսով, շաքարի օշարակի հավելումով կամ առանց դրա, արտաքին տեսքով պարզ՝ նստվածքի զանգվածային մասը 0,2% ոչ ավելի և ոչ պարզ՝ 0,8% ոչ պակաս, ԳՕՍՏ Ռ 52184-2003, ԳՕՍՏ Ռ 52185-2003 կամ ԳՕՍՏ Ռ 52186-2003: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2009 թ. հունիսի 26-ի թիվ 744-Ն որոշմամբ հաստատված ,Հյութերին և հյութամթերքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգիե, ,Սննդամթերքի անվտանգության մասինե ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | լիտ | 225.0 | 1462500.0 | 6500 | ՀՀ Արարատի մարզ գ.Արմաշ փ. Ս. Նիկողոսյան 12 | | 31.12.2018 |

ԳՆՈՒ

,,Ակադեմիկոս Ա. Հայրիյանի անվան Արմաշի առողջության կենտրոն,, ՓԲԸ
ՀՀ, Արարատի մարզ, գ. Արմաշ,
«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ » ՓԲԸ
Արարատի մասնաճյուղ
h/h 11500604222600
ՀՎՀՀ 04101356

Տնօրեն Լևոն Հայրիյան

## ՎԱՃԱՌՈՂ

<<Արմինաշող>> ՍՊԸ
ք. Արարատ, Սուրբ Ամենափրկիչ 28/4
Կոնվերս Բանկ ՓԲԸ
Հ/Հ 1930052367920100
ՀՎՀՀ 04112884

Տնօրեն Հ. Գևորգյան

---------------------------------
/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված 2

N 01 ՍԱԿ-ԳՀԱՊՁԲ -18/5 ծածկագրով

գնանշման հարցման կնքված 08.01.2018թ

«Արմինաշող» ՍՊԸ

Գնման ժամանակացույց

| Հ/Հ | Գնման ենթակա առարկաների անվանումները | Չափի միավոր | Միա-վորի գինը | Ըստ ամիսների գնման ենթակա քանակները 2018թ. | | | | | | | | | | | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | քանակը |
| 1 | 2 | 3 | | 4 | | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 |
| 3 | Միս հավի ( բուդ ) | կգ | 600 | 30 | 30 | 30 | 30 | 30 | 30 | 30 | 30 | 30 | 30 | 30 | 30 | 360 |
| 9 | Բրինձ | կգ | 320 | 125 | 125 | 125 | 125 | 125 | 125 | 125 | 125 | 125 | 125 | 125 | 125 | 1500 |
| 13 | Հաճար | կգ | 280 | 40 | 40 | 40 | 40 | 40 | 40 | 40 | 40 | 40 | 40 | 40 | 40 | 480 |
| 18 | Գաթա | կգ | 1000 | 40 | | | | | | | | | | | 10 | 50 |
| 21 | Խտացրած կաթ (400գ ) | տուփ | 265 | 100 | 100 | 100 | 100 | 100 | 100 | 100 | 100 | 100 | 100 | 100 | 100 | 1200 |
| 26 | Կարագ | կգ | 2550 | 33 | 33 | 33 | 33 | 33 | 33 | 33 | 33 | 33 | 33 | 35 | 35 | 400 |
| 30 | Ջուր | հատ | 55 | 830 | 830 | 830 | 830 | 830 | 830 | 830 | 830 | 830 | 830 | 830 | 870 | 10000 |
| 32 | Պաղպաղակ | հատ | 50 | | | | | | | 300 | 500 | 400 | | | | 1200 |
| 42 | Տավարի միս | կգ | 2140 | 80 | 80 | 80 | 80 | 80 | 80 | 80 | 80 | 80 | 80 | 80 | 80 | 960 |
| 44 | Ձեմ | կգ | 650 | 25 | 25 | 25 | 25 | 25 | 25 | 25 | 25 | 25 | 25 | 25 | 25 | 300 |
| 45 | Հյութ մրգային (ըմպելիք) | լիտր | 225 | 540 | 540 | 540 | 540 | 540 | 540 | 540 | 540 | 540 | 540 | 540 | 560 | 6500 |

Գնորդ՝

,,Ակադեմիկոս Ա. Հայրիյանի անվան Արտաշի առողջության կենտրոն,, ՓԲԸ

ՀՀ Արարատի մարզ գ. Արտաշ

,,ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ,, ՓԲԸ Արտաշատի մ/ճ

Հ/Հ 1150060422...

ՀՎՀՀ 04101366

Տնօրեն.........................

Վաճառող՝

<<Արմինաշող>> ՍՊԸ

ք, Արարատ,Սուրբ Ամենափրկիչ 28/4,,

,,Կոնվերս Բանկ,, ՓԲԸ

Հ/Հ 1930052367920100

ՀՎՀՀ 04112884

Տնօրեն...................................Հ. Գևորգյան

(ստորագրություն)

Կ.Տ.                                                                                     Կ.Տ.

Հավելված 3
N 01 ԱԱԿ-ԳՀԱՊՁԲ -18/5 ծածկագրով
գնանշման հարցման կնքված 08.01.2018թ

«Արմինաշող» ՍՊԸ

Վճարման ժամանակացույց

ՀՀ.դրամ

| N | Պատվիրատուի (ստացողի) և գնման ենթակա ապրանքների անվանումը | | Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ.-ի կազմակերպության միջոցների հաշվին (անողական կարգով), ընդ | | | | | | | | | | | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | I եռամսյակ | | | II եռամսյակ | | | III եռամսյակ | | | IV եռամսյակ | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | գումար |
| 1 | 2 | | 3 | | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 |
| | ,,Ակադեմիկոս Ա. Հայրիյանի անվան Արմաշի առողջության կենտրոն,, ՓԲԸ | | 654030.0 | 1308060.0 | 1962090.0 | 2616120.0 | 2943135.0 | 3270150.0 | 3597165.0 | 3924180.0 | 4578210.0 | 5232240.0 | 5886270.0 | 6540300.0 | 6540300 |
| 3 | Միս հավի ( բուդ ) | կգ | 21600 | 43200 | 64800 | 86400 | 97200 | 108000 | 118800 | 129600 | 151200 | 172800 | 194400 | 216000 | 216000 |
| 9 | Բրինձ | կգ | 48000 | 96000 | 144000 | 192000 | 216000 | 240000 | 264000 | 288000 | 336000 | 384000 | 432000 | 480000 | 480000 |
| 15 | Հաճար | կգ | 13440 | 26880 | 40320 | 53760 | 60480 | 67200 | 73920 | 80640 | 94080 | 107520 | 120960 | 134400 | 134400 |
| 18 | Գաթա | կգ | 5000 | 10000 | 15000 | 20000 | 22500 | 25000 | 27500 | 30000 | 35000 | 40000 | 45000 | 50000 | 50000 |
| 21 | Խտացրած կաթ (400գ ) | տուփ | 31800 | 63600 | 95400 | 127200 | 143100 | 159000 | 174900 | 190800 | 222600 | 254400 | 286200 | 318000 | 318000.0 |
| 26 | Կարագ | կգ | 102000 | 204000 | 306000 | 408000 | 459000 | 510000 | 561000 | 612000 | 714000 | 816000 | 918000 | 1020000 | 1020000.0 |
| 30 | Ձու | հատ | 55000 | 110000 | 165000 | 220000 | 247500 | 275000 | 302500 | 330000 | 385000 | 440000 | 495000 | 550000 | 550000.0 |
| 32 | Պաղպաղակ | հատ | 6000 | 12000 | 18000 | 24000 | 27000 | 30000 | 33000 | 36000 | 42000 | 48000 | 54000 | 60000 | 60000.0 |
| 42 | Տավարի միս | կգ | 205440 | 410880 | 616320 | 821760 | 924480 | 1027200 | 1129920 | 1232640 | 1438080 | 1643520 | 1848960 | 2054400 | 2054400.0 |
| 44 | Ձեմ | կգ | 19500 | 39000 | 58500 | 78000 | 87750 | 97500 | 107250 | 117000 | 136500 | 156000 | 175500 | 195000 | 195000.0 |
| 45 | Յուղ միգային (բնական ) | լիտր | 146250 | 292500 | 438750 | 585000 | 658125 | 731250 | 804375 | 877500 | 1023750 | 1170000 | 1316250 | 1462500 | 1462500.0 |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Սննդամթերք | - | 10% | 20% | 30% | 40% | 45% | 50% | 55% | 60% | 70% | 80% | 90% | 100% | 100% |

Գնորդ՝
,,Ակադեմիկոս Ա. Հայրիյանի անվան Արմաշի առողջության կենտրոն,, ՓԲԸ
ՀՀ Արարատի մարզ, գ. Արմաշ
,,ՀԱՅ ԲԻԶՆԵՍ ԲԱՆԿ,, ՓԲԸ Արարատի մ/ճ

Հ/Հ 11500604222690
ՀՎՀՀ 04101356
Տնօրեն.................................Լ. Բաղդիկյան
(ստորագրություն)

Վաճառող՝
<<Արմինաշող>> ՍՊԸ
Ք, Մասիս,Սուրբ Ամենափրկիչ 28/4,,

,Կոնվերս Բանկ,, ՓԲԸ

Հ/Հ 1930052367920100
ՀՎՀՀ 04112884
Տնօրեն.................................Հ. Գերասիմյան
(ստորագրություն)
Կ.Տ.

*Հավելված 11*
ԱԱԿ-ԳՀԱՊՁԲ -18/5 *ծածկագրով*
*գնանշման հարցման հրավերի*

# ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան «08 » հունվարի 2018 թ.**

Արմինաշըր ՍՊԸ ն, ի դեմս Ընկերության տնօրեն Հ. Գերասիմյանի , Ն/Ք 000713511, տրված 12.17.2013 թ., 026 – ի կողմից
Ընկերության անվանումը Ընկերության տնօրենի անուն ազգանունը, անձնագրային տվյալները
որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

*Ընկերությունը մասնակցում է* « Ակադեմիկոս Ս. Հայրիյանի անվան Արյունաբանական կենտրոն » *ՓԲԸ* * *(այսուհետ՝ Պատվիրատու) կողմից*
պատվիրատուի անվանումը
կազմակերպված *ԱԱԿ-ԳՀԱՊՁԲ -18/5*___* ծածկագրով գնման ընթացակարգին:
ընթացակարգի ծածկագիրը

1.1 Սույն գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ «Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների»:

1.2 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.3 Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթղթերի բնօրինակները, որոնք նշվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.4 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.5 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և վավեր է Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնած պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնության ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

Արմինաշըր ՍՊԸ
Ընկերության անվանումը

ք. Երևան [illegible] 28/1
Ընկերության հասցեն

Յունիբանկ ՓԲԸ
Ընկերությանը սպասարկող բանկի անվանումը

1930052367920100
Ընկերության բանկային հաշվեհամարը

04112884
Ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը

Հ. Գերասիմյան
Ընկերության տնօրենի անուն ազգանունը, ստորագրությունը

Կ.Տ

* լրացվում է համաձայնագրի [illegible] կողմից՝ [illegible] հրապարակելը:

**լրացվում է մասնակցի կողմից

1. ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ[21] N
*(պայմանագրի կատարման ապահովում)*

2. Ներկայացման ամսաթիվը՝ "___"____20___թ.

3. Ընկերություն (այսուհետ՝ վճարող)՝ Արմինաշող ՍՊԸ

4. Վճարողի բանկը՝ Կոնվերս Բանկ ՓԲԸ

5. Վճարողի հաշվի համարը՝ 1930052367920100

6. Վճարողի ՀՎՀՀ՝ 04112884

7. Վճարողի ՀԾՀ՝ 3505650242

8. Շահառու՝ << Ակադեմիկոս Ա. Հայրիյանի անվան Արմաշի առողջության կենտրոն >> ՓԲԸ

9. Շահառուի ՀՎՀՀ՝ 04101356

10.Շահառուի բանկը՝ <ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ> ՓԲԸ

11.Շահառուի հաշվի համարը /հշ.N/ 11500604222600

12.Գումարը թվերով և բառերով՝ 654 030 վեց հարյուր հիսունչորս հազար երեսուն

13.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ AMD.

14.Գործարքի /վճարման/ նպատակը՝ պայմանագրի կատարման ապահովում՝ տուժանքի ձևով

15.Պայմանագրի ծածկագիրը՝ ԱԱԿ-ԳՀԱՊՁԲ 18/5

16.Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը 17. կից՝ --- էջ

| | |
|---|---|
| 19.ա. Շահառուի ստորագրությունները<br>/________________/<br>/________________/<br>19.բ. Կ.Տ. | 18.ա. Վճարողի ստորագրությունները՝<br>/________________/<br>18.բ. Կ.Տ. |
| Կատարված է շահառուի բանկի կողմից<br>20.ա. /________________/<br>/ստորագրություն/<br>20.բ. Կ.Տ.<br>"___"____20___թ. | Կատարված է վճարողի բանկի կողմից<br>21.ա. /________________/<br>/ստորագրություն/<br>21.բ. Կ.Տ.<br>22.Կատարման ամսաթիվը՝ "___"____20___թ. |

[21] Վճարման պահանջագիրը լրացվում է, հիմնվելով սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ N01 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

գ.Արմաշ 09.01.2018թ.

« Ակադեմիկոս Ա.Պ.Հայրիյանի անվ.Արմաշի առողջության կոնտրոն» ՓԲԸ-ը, ի դեմս տնօրեն Լեոն Հայրիյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ **Գնորդ**, մի կողմից և <<Արմինաշող>> ՍՊԸ -ի դեմս Ընկերության տնօրեն Հ.Գերասիմյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ **Վաճառող**, մյուս կողմից, հիմք ընդունելով 09.01.2018թ. կնքված N 01 «ԱԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/5» պայմանագրի 8.15 կետը կնքեցին սույն համաձայնագիր հետևյալ մասին.

*Համաձայնագրի առարկան*

1.1Հետագա համագործակցության համար կողմերը որոշեցին 2018թ. հունվարի 09-ին կնքված N 01<<ԱԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/5>> պայմանագրի մասով հաստատել գնման ժամանակացույցը ըստ Հավելված 1-ի և վճարման ժամանակացույց ըստ հավելված N3-ի, որոնց միջոցով հատկացվում են համապատասխան ֆինանսական միջոցներ վճարման ժամանակացույցով նշվող ապրանքատեսակների և դրանց քանակների ձեռք բերման համար.

1.2Սույն համաձայնագիրը համարվում է **<<ԱԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/5>>N 01** գնման պայմանագրի անբաժանելի մաս:

1.3Սույն համաձայնագրում չնշված կողմերի գնման պայմանագրով նախատեսված մյուս կետերը մնում են անփոփոխ:

1.4 Սույն համաձայնագիրը կազմված է 3 էջից, որից երկու էջերը հավելված N1 և հավելված N3 , հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

1.5 Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

2. *Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները*

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| << Ակադեմիկոս Ա. Հայրիյանի անվան Արմաշի առողջության կենտրոն>>ՓԲԸ | <<Արմինաշող>> ՍՊԸ |
| ՀՀ Արարատի մարզ գ. Արմաշ | Ք, Արարատ,Սուրբ Ամենափրկիչ 28/4,, |
| Փ. Մ. Նիկողոսյան 12 | ,,Ամերիաբանկ,, ՓԲԸ |
| ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ Արարատի մ/ճ | |
| Հ/Հ 11500604222600 | Հ/ Հ 1570024789390100 |
| ՀՎՀՀ 04101356 | ՀՎՀՀ 04112884 |
| Տնօրեն՝ Լ. Հայրիյան | Տնօրեն՝ Հ. Գերասիմյան |